

գիր—կանոնագիրքը, ինչպէս ասացինք, որոշ (ասհմանափակ և օժանդակող) նշանակութիւն ունի. ուստի և իրաւաբանութիւնը պարտաւոր է ուսումնասիրել և օգտուել կանոնագրքից: Սակայն միայն կանոնագիրքը չէ որ այդպիսի նշանակութիւն ունի. կանոնագիրքը հնուօրինից մնացած միակ կանոնական աղբիւրը չէ, որից պէտք է օգտուի մեր այժմեան իրաւաբանութիւնը: Բացի կանոնագրքից նոյնպիսի նշանակութիւն ունին նաև Մաշտոցը, Մխիթար վարդապետի (Քօշ) Դատաստանագիրքը, Ներսէս Շնորհալու Ընդհանրականը և թէ ընդհանրապէս մեր բոլոր մատենագիրների հեղինակութիւնները և գրութիւնները (թէ աստուածաբանական, թէ պատմաբանական և թէ այլ բովանդակութեամբ), որոնք նոյնպէս անհրաժեշտ նիւթեր կարող են մատակարարել մեր եկեղեցու կանոնական իրաւաբանութեանը:

Սիրական Տիգրանեան



ԵԿԵՂԵՅԻ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՅ

ՉՀԱՍՈՒԹԵԱՆ ՎԵՐԱԲԵՐԵԱԼ

ԿԱՆՈՆԱԿԱՆ ԿՈՆԳՐԱԿՆԵՐ

Յունուարի «Արարատի» պաշտօնական բաժնուժ խմբագրութիւնս անհրաժեշտ համարեց հրատարակել միասին նորին Վեհափառութեան երեք կանոնական կոնդակները՝ վերաբերեալ չհասութեան: Իրանցից առաջինը, արուած 1899 թուի յունիսի 30-ին, իրաւունք է տալիս թեմական Ատեաններին (Կոնսիստորիա), ասանց որիմէլու՝ Սլնոր, թոյլ տալ ցանկացողներին ամուսնանալ խնամական հինգերորդ աստիճանում: Այս աստիճանի խնամական պսակները արդէն մի քանի տարի է, որ պաշտօնապէս թոյլատրելի էին ճանա-

չուած տեղապահութեան ժամանակ Սինոդում կայացած օրագրով: 1899 թուի յունիսի 30-ի կոնդակը հայրապետական հաստատութիւն—սանկցիայ—է, տալիս Սինոդի կարգադրութեանը և որոշ չափով զիւրացնում է խնդրատունների դործը՝ Կոնսիստորիաններին յանձնելով այդ աստիճանի պատկանների թոյլատուութիւնը: Պէտք է ի նկատի առնել՝ որ առաջ էլ երբ թէ Սինոդից և թէ Հայրապետներից անթոյլատրելի էր համարուած հինգերորդ խնամ: աստիճանի պատկը, տասնեակներով և հարիւրներով բացառութիւններ են եղած «ոչ յօրինակ այրոց» որով հասարակութեան մեջ այն համոզումն էր կազմուած, որ այդ աստիճանի պատկները թոյլատրելի են, սակայն կապուած որոշ զգուարութեանց և զոհողութեանց հետ:

Հայրապետական երկրորդ կոնդակը՝ 1899 թուի դեկտեմբերի 17-ից, լուծում է մի աւելի մեծ խնդիր: Մեր եկեղեցու կանոնական իրաւունքով արեւակցութեան մինչև վեցերորդ աստիճանը արգելւում է ամուսնութիւնը, իսկ եօթներորդ աստիճանի արեւակիցներին այդ թոյլատրւում է: Սակայն այս մասին միշտ եղել են թեր և դէմ կարծիքներ, գրուել են ուսումնասիրութիւններ, գրքեր և յօդուածներ, վերջապէս այս մասին եղել է տեղապահութեան ժամանակ նաև Սինոդի օրագրութիւն, որով արեւակցութեան եօթներորդ աստիճանի ամուսնութիւնը՝ ձայների առաւելութեամբ ընդդէմ փոքրամասնութեան՝ ճանաչուել է անթոյլատրելի, թէև նախկին Հայրապետները շատ անգամ, իսկ այժմեան զահակալոդ Հայրապետը միշտ և ինչպէս ասուած է կոնդակում՝ «անխտիր» իւր Հայրապետական բացառիկ անօրինական իրաւունքով (dispense) թոյլ է տուել բոլոր խնդրողներին արեւակցական եօթներորդ աստիճանի ամուսնութիւնը: Գեկտի 17-ի կոնդակը այդ աստիճանի ամուսնութիւնը ճանաչում է թոյլատրելի և արտօնում է Սինոդին «այսուհետև անպայման թոյլատրել Սինոդի օրագրերով եօթներորդ աստիճանի աղգակցական (==արեւակցական) ամուսնութիւնները, որովհետև այդպէս է ժամանակի պահանջը»: Ուրեմն այսուհետև այլ ևս կարօտութիւն չկայ հայցել Հայրապետական բա-

ցառիկ անօրինութիւն (dispense) եօթներորդ աստիճանի արեւակցական պատկերի համար, որով և շատ մեծ չափով թեթեւանում է ժողովրդի վրայ ծանրացած լուծը, պակասում են ապօրինի կենակցութեանց և ապօրինի զաւակների թիւը, և վերադառնում ենք երկար խարխափումներից յետոյ մեր եկեղեցական կանոնադրութեան վերջին վճիռների ուղիղ գործադրութեանը:

Երրորդ կանոնական կոնդակը տրուած է 1902 թուի յունուարի 4-ին: Այս կոնդակով պարզ և բացայայտ կերպով որոշւում է թէ ո՞ր պատկերն են անվաւեր, և ո՞ր պատկերը՝ անխոյառութիւն:

Անխոյառութիւն են համարւում արեւակցութեան հինգերորդ և վեցերորդ աստիճանի պատկերը և խնամեցութեան չորրորդ աստիճանի պատկեր: Այսպիսի պատկեր թոյլ տալու իրաւունք չունին ոչ կոնսիստորիաները և ոչ Սինոդը: Արտակարգ հանգամանքներում այս աստիճանի պատկեր թոյլ տալու իրաւունքը վերապահուած է ուրեմն միմիայն Հայրապետական բացառիկ անօրէնութեանը (dispense):

Անվաւեր են համարւում այսինքն իբրև չեղած, բոլոր այն պատկերը, որ արեւակցական հինգերորդ և խնամեցական չորրորդ աստիճաններից աւելի մօտ աստիճաններում են կատարուած, այն է՝ արեւակցութեան չորրորդ աստիճանի պատկեր, խնամեցութեան երրորդ աստիճանի պատկեր և այլն:

Այս կանոնական կոնդակը սահմանում է և պատիժներ հետեւեալ ձևով.

Ա. Քահանան՝ որ համարձակում է պատկել չորրորդ աստիճանի արեւակիցներին՝ զրկւում է իսպառ քահանայագործութիւնից: Իսկ եթէ քննութեամբ ապացուցուի, որ պատկաղիր քահանան անգիտութեամբ է կատարել այդպիսի պատկը՝ անզգուշութեանն համար ենթարկւում է միամեայ ազաշխարանաց վանքույ: Այս աստիճանում ամուսնացողների պատկն համարւում է անվաւեր, կենակցութիւնն ապօրինի, զաւակներն ապօրինի: Կոնդակը չէ որոշում միւս անվաւեր պատկի, — այն է՝ երրորդ խնամեցական աստիճանի — պատկաղիր քահանայի պատժի չափը:

Անխոյառելի պատկների համար որոշուած են հետեւեալ պատիժները.

Բ. Արեւակցութեան հինգերորդ աստիճանի պակաղիր քահանան ենթարկուում է վանական ապաշխարանայ եռամեայ ժամանակով, անդիտութեան դէպքում՝ վեցամսեայ ապաշխարանայ: Պատկուածները ենթարկուում են վեցամսեայ ապաշխարութեան:

Գ. Արեւակցութեան վեցերորդ աստիճանի և խնամական չորրորդ աստիճանի պակաղիր քահանան ենթարկուում է միեկէօամեայ վանական ապաշխարութեան, անդիտութեան դէպքում՝ եռամսեայ ապաշխարութեան: Պատկուածները — եռամսեայ ապաշխարութեան տեղական եկեղեցում:

Ինչպէս պարզ երևում է կոնդակից՝ անթոյլատրելի պատկները՝ երբ արդէն կատարուած են՝ պահում են իրենց ոյժը, և այդպիսի պատկներից ծնուած զուակները համարուում են օրինաւոր:

Մեր խորին համոզմամբ այս երեք կանոնական կոնդակները մի մեծ քայլ են յառաջադիւթեան և որոշ կարգաւորութիւն են մտցնում մեր անմշակ և խառնիխուռն ամուսնական դորձերում:

Գ. Տ. Մ.

*
**

Յունուարի 31-ին Շամախին նորից քանդուեց երկրաշարժից: Հարիւրնւոր թուրքեր և մի քանի տասնեակ հայեր սպանուեցին վլատակների տակ մնալով: Քաղաքացիների վնասը հաշուում են միլիոններով: Թէև աւելի պակաս չափով՝ այսուամենայնիւ մեծ կորուստներ ունեցան Շամախու շրջակայ հայ և թուրք դիւղերը: Հարիւրաւոր տներ քանդուել են և հազարաւոր դիւղացիներ նիւթական մեծամեծ վնասների ենթարկուել: Սկսած Կայսերական Քահոյքից մեծ կարեկցութեամբ վերաբերուեցին ամենքը Շամախեցիների դժբախտութեանը: Նպաստների և նուիրատուութեանց ցուցակները հրատարակուում են օրաթերթերում:

Վեհափառ Հայրապետը Շամախու կործանման դժբախտ լուրն առնելուն պէս հրամայեց անմիջական նպաստ ուղարկել Մայր Աթոռից 1000 ռ. 300 ռ. էլ աւելացրեց Արևոդը: Ինչպէս տեղեկանում ենք [Թերթերից՝ կարգադրուած է Նորին Սրբութիւնից նաև Բագուայ եկեղեցական գումարներից մի քանի հաշար բուրջի նպաստ բաշխել արկածեալներին: Ժողովուրդը՝ մասնաւորապէս հայ ժողովուրդը, մեծ մասամբ թողնում է Շամախին՝ գաղթելով դէպի Բագու, մասամբ նաև Թիֆլիս, Ղուբա և այլ քաղաքներ: Վերջին կէս դարում Շամախին հեռոցհեռէ կորցրեց իւր կեդրոնական նշանակութիւնը ոչ միայն նահանգի այլ և հայ լուսաւորչական թեմի համար. հայութիւնը կեդրոնացաւ Բագու, որ Կ. Պոլսից և Թիֆլիսից յետոյ՝ աշխարհի ամենահայաշատ քաղաքն է: Աւելի ևս շեշտեց Բագուի կեդրոնական նշանակութիւնը երկաթուղին, կապելով այդ քաղաքը անմիջապէս Հիւս. Կովկասի, Ղուբայի, Վաղսասնի և միւս կողմից Թիֆլիսի հետ, այնպէս որ Շամախին իւր 23 հայաբնակ գիւղերով մնաց առանձնացած: Վաղուց արդէն պիտի հարց ծագած լինէր թեմական իշխանութիւնը և թեմական հաստատութիւնները Շամախուց Բագու տեղափոխելու համար: Այժմն այս մեծ աղէտից յետոյ, երբ քանդուել են Շամախու եկեղեցին և կոնսիստորիան, որի արևիւր մնացել է փլատակների տակ, երբ քաղաքացի հայ ժողովուրդը փախչում է Շամախուց՝ հայ թեմական հաստատութեանց տեղափոխութեան կարևոր հարցը՝ եթէ կարելի է այսպէս ասել՝ վճռւում է ինքն իրան: Հարկաւ այլ ևս ոչ միայն միաբնակի նոր թեմական մայր տաճար, առաջնորդարան, կոնսիստորիա, թեմական դպրանոց կառուցանել Շամախու երեւուն հողի վրայ, այլ այդպէս վարուել կնշանակէ գիտակցաբար վտանգի ենթարկել այդ հաստատութիւններն և դրանց մէջ ծառայող կամ ուսանող մարդկանց:

Յանկալի չէ որ Շամախու շրջակայ հայ գիւղացիները գաղթեն, քանի որ ուրիշ տեղեր չկան աղատ և յարմարաւոր հողեր մշակութեան համար: Քաղաքացիների մի մասն էլ անկասկած կմնայ իւր նախկին տեղում, կվերանորոգէ իւր

փլատակները, բայց հազիւ թէ երբ և իցէ դժբաղդ Շամա-
խին իբրև մարդաշատ և հայաշատ քաղաք վերականգնի:

Գ. 8. Մ.



Տ Ա Ճ Կ Ա Հ Ա Յ Ք

Կ. Պօլսի ս. Պատրիարքի Երջարեալանը եւ որբա- նոցների վերածումը արհեստանոցների

Պաւառական որբանոցներու տեղութեան պայմանաժամը
կը սկսի լրանալ հետզհետէ և հարկ կը լինի փակել զանոնք մի առ
մի, քանի սպառին բարերարներու սահմանած նպաստներն և
դադրին ընդհանուր նուիրատուութիւնք, որոց արդիւնքով երե-
սուն և չորս որբանոցներ բացուեցան կարօտեալ դաւառներու
մէջ: Այս առժամանակեայ հաստատութիւնք պատասպարեցին ու
խնամեցին ցարդ բազմաթիւ անտէր մանուկներ՝ պատուար
կանգնելով կարօտութեան դէմ, որու անմռունչ զոհերը պիտի
լինէին այդ մանուկներն, եթէ պետական շնորհներու հետ՝ մեր
աղգայնոց ձեռնտուութիւնք չհասնէին անոնց օգնութեան:

Այլ սակայն այդ որբանոցներուն մէջ կան տակաւին ան-
չափահաս ու կարօտ տղաք, արժանի խնամքի ու պաշտպանու-
թեան, կը գտնուին դեռ շատեր՝ որ չեն աւարտած արհեստն,
զոր կուտանին, հայթայթելու համար իրենց ոգեպահիկն, երբ
մեկնին որբանոցէն, ուստի հազիւ թէ դաւառներու մէջ լսուած
որբանոցներէ ոմանց փակման լուրն, թախանձագին խնդիրներ
կը տեղան ի Պատրիարքարան, երկարաձգելու դեռ անոնց տեղ-
դութեան շրջանն և արդիւնելու այն բազմադիմի անպատեհու-
թիւններն, որ կրնան ծագիլ որբերու լքումէն:

Այսպիսի պարագայից առջև փակել յեղակարծ այդ դժու-
թեան յարկերն և ցիւր ու ցան վտարել ու իրենց բախտին լքա-
նել այդ մատաղատի մանկտին, մանաւանդ ցուրտ ձմեռով, որ
պատած է արդէն դաւառներն բուքով ու ձիւնով, կարելի չէր,